ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1962 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակով ստեղծվեցին սոցիալիստական արտադրահարաբերություններ։ Սոցիալիզմը ծնեց աշխատանքի արտադրողականության աճման հզոր խթաններ և շարժիչ ուժեր։ Որպես հասարակության զարգացման նոր օրինաչափություն հանդես եկավ սոցիալիստական մրցությունը, որն արտահայտություն է գտնում աշխատավորների ստեղծագործական ակտիվության և ինքնագործունեության զարգացման, արտադրության անընդհատ վերելքն ապահովելու նրանց ձգտման մեջ։ Նա ազատություն է տալիս աշխատավորների ստեղծագործական ընդունակություններին և պայմաններ ստեղծում ժողովրդական ստեղծագործության զարգացման բոլոր հնարավորությունների լրիվ օգտագործման համար։

Սովետական ժողովուրդը, մեր երկրի վերակառուցման և հետագա զարգացման տարիներին ի հայտ բերեց աշխատանքային սխրագործությունների աննախընթաց օրինակներ և ցուցադրեց սոցիալիստական աշխատանքի նորանոր ձևեր։ Աշխատավորների այդ սխրագործությունն ունի հարուստ պատմություն։ Երկրի տնտեսական քայքայվածության պայմաններում ծագեցին կոմունիստական աշխատանքի առաջին ծիլերը՝ կոմունիստական շաբաթօրյակները, որոնք սոցիալիստական մրցության սկիզբն էին։ Իսկ սոցիալիստական էկոնոմիկայի բուռն ծաղկման, ժամանակակից ինդուստրիայի, կուլտուրայի բազմակողմանի զարգացման պայմաններում առաջ եկան կոմունիստական աշխատանքի բրիգադները։

Սոցիալիստական մրցության բազմատեսակ ձևերը, որոնք հանդես են եկել տարբեր ժամանակներում, ընդհանուր շատ բան ունեն, քանի որ բոլորն էլ ուղղված են միևնույն խնդրի կատարմանը՝ մարդկանց սովորեցնել կոմունիստաբար աշխատել։ Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը հոգատարությամբ ու հմտությամբ ղեկավարում են սոցիալիստական մրցությունը, ստեղծելով բոլոր պայմանները աշխատավորության այդ հայրենաբխական շարժման հետագա զարգացման և նոր նվաճումների հասնելու համար։

Առաջին հնգամյակի տարիներին ծավալված սոցիալիստական մրցության և այժմ բուռն թափով զարգացող կոմունիստական աշխատանքի բրիգադների պատմությանն են նվիրված Լ. Ա. Խուրշուդյանի «Հայաստանում սոցիալիստական մրցության պատմությունից» և Ա. Կ. Գրիգորյանցի «Կոմունիստական աշխատանքի բրիգադները Հայաստանում» աշխատությունները։

Լ. Ա. Խուրշուդյանի «Հայաստանում սոցիալիստական մրցության պատմությունից»[1] աշխատությունը նվիրված է առաջին հնգամյակի դժվարին, բայց աշխատանքային հերոսություններով հարուստ ժամանակաշրջանին, երբ Հայաստանում սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը դարձան զանգվածային շարժում, զարգացան և խոր արմատներ գցեցին մեր բանվորների հոգեբանության մեջ, տասնյակ հազարավոր աշխատավորների դասակարգային գիտակցությունը բարձրացնելով մի նոր որակի։

Հեղինակը մի ամփոփ առաջաբանով ընդգծելով սոցիալիստական արտադրական հարաբերությունների ստեղծումով կյանքի կոչված սոցիալիստական մրցության՝ հասարակության զարգացման նոր օրինաչափություն լինելը, աշխատության երեք գլուխներում պարզաբանում է Հայաստանի արդյունաբերության մեջ մասսայական սոցիալիստական մրցության ծավալման նախադրյալները, ցույց է տալիս հնգամյակի առաջին տարում սոցիալիստական մրցության ծավալումը և այն պայքարը, որ մղել է բանվոր դասակարգը հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար։

---

[1] *Լ. Ա. Խուրշուդյան, Հայաստանում սոցիալիստական մրցության պատմությունից (1928—1932)։ Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1961։*

Համառոտակի նկարագրելով առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և ապա դաշնակների տիրապետության շրջանում Հայաստանի, առանց այն էլ հետամնաց, տնտեսության բայքայումը, հեղինակը պարզորոշ է դարձնում Սովետական իշխանության առաջին իսկ օրերից Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության կիրառումով թևավորված մեր արդյունաբերության վերականգնման և զարգացման ուղին։

Սովետական Միությունը, շնորհիվ մեր բազմազգ ժողովրդի ուժերի լարման, մինչև 1928 թվականը արդյունաբերության զարգացման բնագավառում զգալի հաջողությունների հասավ։ Սակայն նա դեռևս մնում էր հիմնականում որպես ագրարային երկիր։ Հարկավոր էր ստեղծել ծանր ինդուստրիա՝ մեր երկիրը ռազմական և տնտեսական ամեն տեսակի ոտնձգություններից ապահովելու և ամրապնդելու համար։ Այդ ծրագրի իրականացման նպատակով էլ ստեղծվեց առաջին հնգամյա պլանը, ամբողջ ճակատով սոցիալիզմի ծավալուն ճարձակման պլանը, որի հիմնական խնդիրը սոցիալիստական ինդուստրացումն էր։ Հնգամյա պլանում առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում ազգային ծայրամասերի, այդ թվում և Հայաստանի տնտեսության և կուլտուրայի վերելքի վրա։ 1929 թ. ՀԿ(բ)Պ VI համագումարը հավանություն տվեց, իսկ Սովետների VI համագումարը հաստատեց ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանը, որը ՍՍՌՄ հնգամյա պլանի բաղկացուցիչ մասն էր։

Հայաստանի Կոմունիստական պարտիան, հետևելով Վ. Ի. Լենինի «Ինչպե՞ս կազմակերպենք մրցությունը» հոդվածի պատգամներին, կարողացավ հայ աշխատավորության ուժերը ի սպառնել պարտիայի և Սովետական կառավարության՝ սոցիալիստական մրցության ծավալման ուղղությամբ ձեռք առած միջոցառումների կենսագործմանը։ Հայաստանի բանվոր դասակարգը և գյուղացիությունը սոցիալիստական շինարարության այդ ծրագրի իրագործման համար չխնայեցին իրենց ուժերը և մեծ թափով անցան աշխատանքի։

Հմտորեն օգտագործելով մամուլի տվյալները և արխիվային նյութերը, Լ. Ա. Խուրշուդյանը հանգամանորեն պարզաբանում է առաջին հնգամյակի նախորյակին Հայաստանի արդյունաբերության վիճակը, պատմում է սոցիալիստական մրցության ծագման մասին, ներկայացնում է առաջին հնգամյա պլանն ու նրա հիմնական խնդիրները, տալիս է մասսայական սոցիալիստական մրցության ծավալման սկիզբը, ապա մանրամասն շարադրում է շարժման ծավալումն և հնգամյա պլանը չորս տարում կատարելու համար մղվող պայքարը։ Վերջում հեղինակը հանրագումարի է բերում արդյունաբերության բնագավառում առաջին հնգամյակի հիմնական արդյունքները։

Աշխատությունը գրված է գիտական բարեխղճությամբ։ Սակայն որոշ հարցեր հեղինակը անուշադրության է մատնել։

Դեռ անցյալ դարում, քննադատելով բուրժուական տնտեսագետներին (որոնք թերագնահատում էին արտադրության նյութական-առարկայական պայմանները), Կ. Մարքսը շեշտում էր մարդկանց կենդանի աշխատանքի մեծագույն նշանակությունը արտադրության աճման գործում։ Արտադրության պրոցեսում աշխատող բանվորի առաջնակարգ դերը մատնանշել է նաև Վ. Ի. Լենինը։

«Նոր տնտեսական քաղաքականությունը և բաղդատվարների խնդիրները» հոդվածում նա գրում է, որ «ժողովրդական տնտեսության ամեն մի խոշոր ճյուղը պետք է կառուցել անձնական շահագրգռվածության վրա»[2]։ Աշխատանքի արտադրողականության աճման մյուս հզոր շարժիչը՝ սոցիալիստական մրցությունը ճիշտ կազմակերպելու առաջին պայմանը իրենց՝ աշխատանքի մեջ աշխատողների նյութական շահագրգռվածության սկզբունքի պահպանումն է։ Դա ցույց է տալիս, որ սոցիալիստական մրցության մեջ մտնող յուրաքանչյուր բանվոր սպասում է, որ «...արտադրության կազմակերպման լավագույն օրինակը զուգորդվելու է աշխատուժի անխուսափելի թեթևացման և սպառման գումարի մեծացման հետ նրանց համար, ովքեր կիրառել են այդ լավագույն կազմակերպումը»[3]։ Ուսումնասիրության մեջ հարցի այս կողմը անուշադրության է մատնված, միայն մի քանի տողով, այն էլ շատ ընդհանուր գծերով է խոսվում այն մասին, թե առաջին հնգամյակի տարիներին ինչպես էր կազմակերպվում աշխատանքի վարձատրումը, ինչպես էր իրականացվում լավագույն ցուցանիշների հասնող աշխատողների նյութական խրախուսումը և ինչպիսի նշանակություն ունեցավ այն աշխատանքի արտադրողականության բարձրացման, պլանների կատարման և գերակատարման համար։

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 47։

3 Վ. Ի. Լենին, Երկեր. հ. 27, էջ 241—242։

Եթե Հայաստանում սոցիալիստական մրցության մասին մինչև այժմ առանձին ուսումնասիրություններ չեն գրվել, ապա երկրի այլ վայրերում այդ հարցի մասին լույս են տեսել մեծ թվով աշխատություններ, որոնցում, սակայն, սոցիալիստական մրցության պատմությունը շարադրվել է միակողմանի, մոռացության են տրվել տեղ գտած բյուրոկրատիզմի տվյալները։ Պարտիայի դերը, իբրև սոցիալիստական մրցության, հարվածայնության, ստախանովյան շարժման իսկական ոգեշնչողի՝ անտեսվում էր, մրցության միակ ղեկավար ներկայացվում էր Ստալինը։ Դեռ ավելին, ամեն ինչ ներկայացվում էր անթերի և կատարյալ։ Ի տարբերություն այդպիսի աշխատությունների «Հայաստանում սոցիալիստական մրցության պատմությունից» գիրքը վեր է հանում այն թերությունները, որոնք կային առաջին հնգամյակում արդյունաբերության մեջ ծավալված սոցիալիստական մրցության բնագավառում։

Լ. Ա. Խուրշուդյանի աշխատության մեջ սոցիալիստական մրցության պատմությունը տրված է բազմակողմանի, համոզիչ և հարուստ փաստական նյութի հիման վրա։

Սոցիալիստական մրցության նոր ձևի՝ կոմունիստական աշխատանքի բրիգադների առաջացման ու զարգացման պատմությանն է նվիրված Ա. Կ. Գրիգորյանցի «Կոմունիստական աշխատանքի բրիգադները Հայաստանում»[4] աշխատությունը։

Առաջաբանից և սոցիալիստական մրցության անցած ուղու շարադրանքից հետո Ա. Կ. Գրիգորյանցը առանձին գլխում պարզաբանում է կոմունիստական աշխատանքի բրիգադների դերը՝ որպես սոցիալիստական մրցության նոր էտապի։ Հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրը՝ բացահայտել շարժման առանձնահատկությունները։ Կոմունիզմի ծավալուն կառուցման այս օրերին, երբ սովետական մարդկանց ոգևորող գլխավոր խնդիրը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումն է, միանգամայն պարզ է այն, որ այդ բազան կարելի է ձեռք բերել միայն ու միայն աշխատանքի արտադրողականության անշեղ բարձրացումով։ Այդ արդյունքին հասնելու համար, կոմունիստական աշխատանքի առաջին բրիգադները և հարվածայինները, ինչպես հաջող պարզաբանում է հեղինակը, իրենց նոր գործն ու նոր կյանքը հիմնավորեցին երեք պատվիրաններով։ Նրանք իրենց առջև խնդիր դրեցին հասնել առավել բարձր արտադրողականության, ձեռք բերել բազմակողմանի խորը գիտելիքներ և կիրառել կոմունիստական վարքագիծը հասարակության մեջ ու կենցաղում։

Կոմունիստական աշխատանքի համար մղվող շարժման նպատակն է արագությամբ վերացնել չմեքենայացված աշխատանքային պրոցեսները, ամրացնել գիտության ու արտադրության գործիչների ստեղծագործական կապը։ Հայրենասիրական շարժման մասնակիցների տեխնիկական գիտելիքների բարձրացման ու կազմակերպման ուղղությամբ մեծ աշխատանք կատարեցին կոմերիտական կազմակերպությունները։ Այդ աշխատանքի շնորհիվ առաջ եկավ չտեսնված տեխնիկական առաջընթաց, որը վճռական պայման է աշխատանքի այնպիսի արտադրողականության ձեռք բերման, որն անհրաժեշտ է կոմունիստական հասարակարգի լիակատար հաղթանակի համար։ Մրցությունը լինելով ստեղծագործական, անընդհատ հարստացվում է նոր լավանդակությամբ։ Դրա լավագույն արտահայտությունն է Վիշնե Վոլոչոկ քաղաքի բամբակագործական տեքստիլ կոմբինատի առաջավոր բանվորուհի Վալենտինա Գագանովայի նոր նախաձեռնությունը։ Ընդօրինակելով նրան, Երևանի, Լենինականի և Կիրովականի շատ ձեռնարկությունների առաջավորներ հասան բարձր տնտեսական արդյունքի։ Բնորոշելով Վ. Գագանովայի և նրա հետևորդների հայրենասիրական նախաձեռնությունը, որպես գիտակցականության վառ ապացույց, հեղինակը սակայն նրան չափից ավելի է տեղ հատկացնում աշխատության մեջ, անտեսելով մեր ռեսպուբլիկայի բանվորների սեփական նախաձեռնությունները։

«Հանուն բազմակողմանի բարձր գիտելիքների» գլխում ցույց է տրված այն պայքարը, որ մղել են կոմունիստական բրիգադները համառորեն սովորելու, որակավորումն անընդհատ կատարելագործելու, կրթական և կուլտուրական մակարդակը մշտապես բարձրացնելու ուղղությամբ։ ՍՄԿՊ Կենտկոմը 1960 թվականի մայիսին կոմունիստական աշխատանքի բրիգադների ու հարվածայինների համամիութենական խորհրդակցության մասնակիցներին ուղղված ողջույնի մեջ նշում էր, որ «աշխատանքը, ուսուցումը և կենցաղը միացնելով միմյանց այդ մրցությունը ակտիվ ազդեցություն է թողնում կյանքի և մարդու գործունեության բոլոր կողմերի վրա, կարևոր գործոն է հանդիսանում մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունները վերացնելու համար»[5]։

---

4 Ա. Կ. Գ ր ի գ ո ր յ ա ն ց, Կոմունիստական աշխատանքի բրիգադները Հայաստանում։ Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1961։

5 «Սովետական Հայաստան», 28 մայիսի, 1960 թ։

Աշխատության վերջին գլխում Ա. Կ. Գրիգորյանցը հանդամանորեն կանգ է առնում այն հարցի վրա, թե ինչպես կոմունիզմի համար մղվող ծավալուն պայքարի մասնակիցները վերափոխվում են նաև իրենց գիտակցականությամբ։ Կիրառելով կոմունիստական վարքագիծը հասարակության մեջ և կենցաղում, նրանք աստիճանաբար զարգացնում են իրենց գիտակցությունը, հարստացնում են իրենց հոգին բարձր մարդկայնությամբ և նոր որակի հասցնում իրենց աշխարհայացքը։ Նոր մարդու համար կոմունիստական բարոյականությունը հետզհետե դառնում է կոմունիստական աշխատանքի անբաժանելի ուղեկիցը։

Ա. Կ. Գրիգորյանցի գրքույկում ես տեղ են գտել առանձին թերություններ։

Հայրենասիրական այս նոր շարժումը, ինչպես հայտնի է, ծնվեց և աճեց շաբաթօրյակների հարվածային բրիգադների, ստախանովյան, երկհարյուրյակայինների, ռազմաճակատային բրիգադների և բազմահազարականների շարժման հարուստ փորձի հիման վրա։ Այդ իսկ պատճառով հեղինակն իր աշխատության մեջ պետք է ավելի մեծ տեղ տար սոցիալիստական մրցության անցած էտապների պատմությանը որոնցից ծագեցին և որոնց շարունակությունը հանդիսացան կոմունիստական աշխատանքի բրիգադները։

Կոմունիստական աշխատանքի բրիգադներին վերաբերող մասը հարուստ է փաստական տվյալներով՝ ե՛վ ռեսպուբլիկական մամուլը, և՛ բազմատիրաժ թերթերը, ինչպես նաև ընթացիկ արխիվները լավ են ուսումնասիրված։ Սակայն անհրաժեշտ էր խուսափել ձգձգվածությունից և ուղղակի ցույց տալ կոմունիստական աշխատանքի բրիգադների ծագումը։

Աշխատավորների արտադրական սխրանքների մասին թվական անհամար տվյալներ, նրանց կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման գործում ձեռք բերված նվաճումներին վերաբերվող շատ փաստեր աշխատությունը դարձնում են արժեքավոր և հետաքրքիր։ Սակայն ցավոր, հաճախ թվերի ու փաստերի հեղեղի մեջ հեղինակի եզրակացությունները կամ բացակայում են, կամ էլ մնում ստվերում։

* * *

Կարտիայի ծրագրում՝ Կոմունիստական հասարակարգի կառուցման Ծրագրում տրված է հասարակական գիտությունների բնագավառում հետազոտական աշխատանքի ինտենսիվ զարգացման անհրաժեշտությունը, որը կազմում է հասարակության զարգացման ղեկավարման գիտական հիմքը։ «Այդ բնագավառում գլխավորը հանդիսանում են կոմունիստական շինարարության պրակտիկայի ուսումնասիրությունը և տեսական ընդհանրացումը սոցիալիզմի տնտեսական քաղաքական և կուլտուրական զարգացման և նրա՝ կոմունիզմի վերաճելու հիմնական սրընթաց փոփոխությունների հետազոտությունը, կոմունիստական դաստիարակության պրոբլեմների մշակումը»[6]։

Այժմ, երբ սովետական գիտնականների առջև խնդիր է դրված ստեղծել այնպիսի գործեր, որոնք ունենան պրակտիկ և տեսական նշանակություն կոմունիզմի կառուցման գործում է. Ա. Խուրշուդյանի «Հայաստանի սոցիալիստական մրցության պատմությունից» և Ա. Կ. Գրիգորյանցի «Կոմունիստական աշխատանքի բրիգադները Հայաստանում» աշխատությունները պատմագիտական ողջունելի գործեր են։ Նրանք մի կողմից տալիս են մեր հոյակապ նվաճումների և հրաշալի սխրանքների այս կամ այն էտապի պատմությունը, մյուս կողմից՝ ներկայացնում են մեր կյանքի պանծալի հերոսներին։

Է. Խուրշուդյանի և Ա. Գրիգորյանցի աշխատությունները Հայաստանի սոցիալիստական մրցության պատմության տարբեր էտապների ուսումնասիրության առաջին և հաջող փորձեր են։

Ի. ՄԱՆՈՒԿՅԱՆ

6 «ՍՄԿՊ Ծրագիրը», Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 154։